ՏԻԳՐԱՆ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՍՏՐՈՒԿ - ԶԻՆՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՇԱԳԱԱՆ ԱԿՈՒՆՔՆԵՐԻ ՈՐՈՇ ԱՍՊԵԿՏՆԵՐԻ ՇՈՒՐՋ

Ստրուկ զինվորականության ինստիտուտը մուսուլմանական Արևելքին բնորոշ ամենաերկարակյաց և ինքնատիպ երևույթներից մեկն է: Ի տարբերություն սովորական ստրկության, որը բավական տարածում ուներ միջնադարյան հասարակություններում, ստրուկ զինվորականության (ստրուկ՝ արաբերեն «գուլամ»[1] կամ «մամլուք»[2] կամ «աբիդ»[3]) կիրառման պրակտիկան հատուկ է միայն մուսուլմանական աշխարհին: Բյուզանդիայում, օրինակ, Պրոկոպիոս Կեսարացու (VI դ.) վկայությամբ, ստրուկների օգտագործումը կանոնավոր բանակում խստիվ արգելված էր:[4] Իսկ եթե, այնուամենայնիվ, ստրկատերը ցանկանում էր նրան զինվորական ծառայության տալ, ապա պարտավոր էր ստրուկին ազատություն շնորհել նախքան այդ:[5] Իսկ սովորաբար բյուզանդական բանակում ստրուկները ծառաներ էին և կատարում էին ամենածանր աշխատանքները:[6]

Նույնը պետք է ասել նաև Սասանյան Իրանի մասին, որտեղ զինվորական ծառայությունը համարվում էր զինվորական ազնվական խավի արտոնությունը,[7] ընդ որում ստրուկները բացառապես օգտագործվում էին տնային տնտեսությունում կամ զբաղաշտական տաճարներում: [8]

Ստրուկ զինվորականության, որպես ռազմական ուժի լայնորեն կիրառման գործընթացը սկսվել է IX դարից Աբբասյանների կողմից, որից հետո, լայն տարածում ստանալով մուսուլմանական անկախ դինաստիաների մոտ, այն գոյատևել է մինչև XIX դ. վերջը՝ այսինքն մոտ ինը դար: [9]

Իրանում օրինակ, այն վերացվեց միայն եվրոպական ազդեցության տակ՝ դաջարյան Ֆաթհ Ալի Շահի օրոք (1794-1834): [10]

Եգիպտոսում, XIII դարից սկսած մամլուքների՝ թյուրքական ծագում ունեցող ստրուկ զինվորականների իշխանությունը փաստացիորեն պահպանվեց մինչև 1811թ., երբ Մուհամմադ Ալին վերջ դրեց դրան:

Ամերիկացի արևելագետ Այերոս Վրիոնիսի կարծիքով, օսմանյան հանրահայտ «դեվշիրմե»-ի կամ մանկահավաքության ինստիտուտը զարգացել է Սելջուկյանների մոտ տարածված ստրուկ զինվորականության ինստիտուտի հիմքի վրա:[11] Դա քրիստոնյա երեխաների բռնի հավաքագրում էր, որի արդյունքում կազմվում էին հայտնի ենիչերիական գնդերը, որոնք մշտապես քաղաքական ազդեցություն են ունեցել օսմանյան քաղաքականության վրա: Դրանք կազմալուծվեցին միայն 1826թ.՝ սուլթան Մահմուդի նախաձեռնությամբ:[12]

Ստրուկ զինվորականության՝ այդ կարևոր սոցիալական և ռազմական ինստիտուտը առանձնապես կարևորվում է նաև այն պատճառով, որ առաջին թյուրքերը Միջին և Մերձավոր Արևելք ներթափանցել են որպես դուլամամլուքներ (ստրուկներ), որից հետո էլ սկսվել է մուսուլմանական քաղաքակրթության մեջ նրանց ներգրավման գործընթացը: Սա XIդ. սելջուկյան արշավանքներից առաջ թյուրքական էթնոսի առաջին ներթափանցումն էր դեպի Արաբական խալիֆայություն:

Մուսուլմանական աղբյուրները բազմաթիվ տեղեկություններ են հաղորդում տարբեր մուսուլմանական դինաստիաների բանակներում ծառայող «դուլամ-մամլուքների» մասին, սակայն մեզ համար առանձնապես կարևորվում են Տաբարու, Բալազուրիի հաղորդած տեղեկությունները, որոնք վերաբերում են աբբասյան խալիֆա Մութասիմի և դրանից առաջ ընկած շրջանին:

Վերջին մի քանի տասնամյակների ընթացքում ստրուկ զինվորականության երևույթը եղել է համաշխարհային արևելագիտության ուշադրության կենտրոնում: Այդ երևույթի տարբեր ասպեկտները ուսումնասիրվել են բազմաթիվ արևմտյան գիտնականների կողմից, որոնց շարքում նշենք Դ. Սուրդելին, Կ.Է. Բոսվորթին, Դ.Այալոնին, Բ. Լյուիսին, Ջ. Բաչարաչին, Պ. Քրոուֆին[13] և այլոց:

Ֆրանսիացի արևելագետ Դոմինիկ Սուրդելի գրչին է պատկանում Իրաքի և խալիֆայության տարբեր հատվածներում դուլամների ի հայտ գալուն նվիրված համառոտ ակնարկը: Նույն խնդրին է անդրադարձել անվանի անգլիացի արևելագետ Բոսվորթը: Նրա բազմաթիվ աշխատություններում շոշափվում են թյուրք դուլամների տարածման, թյուրքական ծագում ունեցող դինաստիաների հաստատման, մուսուլմանական դինաստիաների մոտ դուլամների օգտագործման և ընդհանրապես թյուրքերի կողմից պարսկա-մուսուլմանական քաղաքակրթության ընկալման ասպեկտները:

Իսրայելցի գիտնական Դավիդ Այալոնն առաջիններից մեկն էր, ով ստրուկ զինվորականության երևույթի ծագմանը վերաբերող մի շարք կարևոր և խոր ուսումնասիրություններ գրեց, որտեղ, ընդհանուր առմամբ, շեշտը դրված է Եգիպտոսի մամլուքյան ռազմական երևույթի վրա:[14]

Ամերիկացի արևելագետ Բեռնարդ Լյուիսը մամլուքյան ինստիտուտին

մոտենում է մեկ այլ տեսանկյունից. նա մամլուքյան համակարգը ներկայացնում է որպես իսլամական հասարակայնության մեջ ռասայական աստիճանավորման վառ դրսևորում: Ըստ նրա՝ թյուրք և աֆրիկյան ծագում ունեցող մամլուքների միջև մշտական հակամարտությունը, հետագայում թյուրք մամլուքների քաղաքական վերելքն ու դրան հակառակ՝ աֆրիկացի ստրուկ զինվորականների անհետացումը պատմական թատերաբեմից, անմիջականորեն կապված է թյուրք մամլուքների կողմից սևամորթների նկատմամբ դրսևորված ռասիստական վերաբերմունքի հետ: [15]

Վերը շարադրված Լյուիսի վարկածը քննադատվել է Ջիր Բաչարաչի կողմից, որը չհերքելով միջնադարյան իսլամական հասարակության մեջ ռասիստական նախապաշարմունքների հնարավոր առկայությունն ու այս կամ այն կերպ նրանց դրսևորումները, այնուհանդերձ արաբական աղբյուրներում սևամորթ ստրուկ զինվորների հետ կապված իրադարձությունների օրինակների վրա վառ կերպով ցույց է տվել, որ Աբբասյան Իրաքից և Իխշիդիների ու Տուլունիների հյուսիսաֆրիկյան տերությունների քաղաքական ասպարեզից նրանց դուրս մղման գործընթացում առաջնայինը ոչ թե ռասայական, այլ տնտեսական, ռազմական և այլ գործոններն են եղել:[16]

Ինչպես արդեն վերը նշվեց, օսմանյան դեվշիրմե և սելջուկյան դուլամական երևույթների սերտ փոխկապակցվածությունը ցույց է տրվել ամերիկացի արևելագետ Սպերոս Վրիոնիսի կողմից:[17]

1981թ. լույս տեսավ անգլիալեզու արևելագետ Պաթրիշիա Քրոունի[18] սկանդալային հռչակ ունեցող «Ստրուկները ոժույգների վրա» աշխատությունը, իսլամական քաղաքակրթության անկման հիմնական պատճառներից մեկը IX դարից սկսած համարում է ստրուկ զինվորականության ինստիտուտը և դրա լույսի ներքո վիճելի եզրակացությունների է հանգում իսլամի բարոյական ճգնաժամի մասին:

Ստրուկ զինվորականության ինստիտուտը բավականին վաղ գրավել է նաև թյուրք գիտնականների ուշադրությունը, որոնց համար դա առանձնակի կարևորություն ունի, քանզի, ինչպես արդեն վերը նշվեց, այն սերտորեն կապված է Սերձավոր և Միջին Արևելք առաջին թյուրքերի ներթափանցման փաստի հետ: Կարելի է բերել Այդին և Օսման Սայիլիների անունները, որոնք իրենց աշխատություններում, թյուրք գիտնականին հատուկ աշխարհընկալմամբ շոշափել են Մավերաննահրի ծայրամասերում տեղակայված թյուրքերի՝ խալիֆայություն ներթափանցման, ինչպես նաև Մութասիմի կողմից թյուրք ղուլամներից համալրված ջոկատների ստեղծման հետ առնչվող ասպեկտները:[19] Ընդհանրապես, թյուրք հեղինակները վարձում են հերքել այն գաղափարը, որ թյուրք ղուլամ-մամլուքների՝ խալիֆայություն ներթափանցումը կապակցված է դրա քաղաքական և տնտեսական խոր անկման սկզբի հետ:

Մուսուլմանական աղբյուրների ընձեռած տեղեկությունների և արևելագիտական ուսումնասիրությունների համադրությունը թույլ է տալիս նշելու այն գործոնները, որոնք նպաստել են ստրուկ զինվորականության առաջացմանը.

Քաղաքական գործոն. Մութասիմ խալիֆան ցանկանում էր պետական զորքին հակակշռող ռազմական ուժ ստեղծել.

Հայտնի է, որ Մութասիմ խալիֆան ստրուկ զինվորականության ինստիտուտը դարձրեց համընդհանուր երևույթ իսլամական իրականության մեջ (այդ պրակտիկան էլ հետագայում ընդօրինակեցին մուսուլմանական անկախ դինաստիաները): Թյուրք ղուլամներից հավաքագրված ռազմաջոկատների ներմուծումը սերտորեն կապված է IX դարի առաջին տասնամյակներում աբբասյան խալիֆաների քաղաքական զգալի դժվարությունների և խալիֆայության մասնատման ընդհանուր միտումի հետ:

Իշխանության անցնելուց ի վեր, Աբբասյանների պետական զորքը ավանդաբար կազմվում էր խորասանյան ծագում ունեցող զինվորականներից՝ աբնայից, քանզի նրանք այն ռազմական հենարանն էին, որոնց շնորհիվ Աբբասյանները ձեռք բերեցին իշխանություն, ընդ որում խորասանյան ջոկատները աբբասյան հաստատումից ի վեր տեղակայված էին Բաղդադում:

Արդեն իսկ Հարուն ստ-Ռաշիդ խալիֆայի մահվանից հետո, նրա որդիներ Ամինի և Մամունի միջև գահի համար բռնկված քաղաքացիական պատերազմը ցույց տվեց, որ խորասանյան ջոկատները սկսել էին սեփական շահեր հետապնդել և վտանգավոր էին դարձել Մամուն և Մութասիմ խալիֆաների համար:

Պետք է նշել, որ վերոհիշյալ ռազմական նորամուծության անմիջական դրդապատճառը դարձավ այն, որ աբնան ընդվզեց Մութասիմի խալիֆայության դեմ և պաշտպանեց նախորդ խալիֆայի՝ Մութասիմի եղբոր, Մամունի որդու՝ Աբբասի թեկնածությունը: Ղուլամներից կազմված զորաջոկատների օգնությամբ Մութասիմը փորձում էր խափանել աբնայի մշտական քաղաքական ինտրիգները և հույս ուներ, ի դեմս ղուլամների, որոնց մեծ մասը թյուրքական ծագում ուներ, ձեռք բերել հավատարիմ ռազմական ուժ, որը, ի տարբերություն նախորդների, հեռու կմնար սեփական քաղաքական շահերը հետապնդելուց:

Ռազմական գործոն. Աբբասյանների ներքին քաղաքացիական պատերազմները նույնպես ցույց էին տալիս, որ աբնան կորցրել է իր երբեմնի ռազմական արդյունավետությունը[20] և զրկվել հաղթող դուրս եկած Մամունի և նրա հիմնական աջակից Տահիր իբն ալ-Հուսեյնի (Տահիրյան դինաստիայի ապագա հիմնադիր), ինչպես նաև իր եղբոր՝ ապագա խալիֆա Մութասիմի վստահությունից:[21]

Ի դեմս թյուրքերի՝ խալիֆաները ձեռք էին բերում ռազմատենչ, մարտունակ և արդյունավետ ռազմական ուժ, որը կապված էին տիրոջը ոչ թե վա-

լա՛-յի (կլիենտելա), այլ անձնական նվիրվածության և ստրկական կապերով:

Մավերաննահրի գործոնը. Հայտնի է, որ քաղաքացիական պատերազմի տարիներին Մամունի նստավայր Մավերաննահրի սահմանագծին գտնվող Մարվում ապաստանած Մութասիմը, անկասկած հնարավորություն ունեցավ ծանոթանալ թյուրքերի ռազմական բարձր ունակություններին:

Այս կապակցությամբ հայտնի արևելագետ Բոսվորթը իր աշխատություններից մեկում իրավացիորեն քննադատելով թուրք գիտնականների այն վարկածները, ըստ որոնց VII և VIII դդ. Մավերաննահրի արաբական նվաճմանը դիմադրություն ցույց տված թյուրքերը եղել են բուն Մավերաննահրի և ոչ թե նրա սահմաններից դուրս ընկած տափաստանների բնակիչներ, ենթադրում է, որ Մավերաննահր ներթափանցած թյուրքերը հավանաբար հիմնականում կարող են Սոդդի իրանցի դիհկանների ջոկատներում վարձկան զինվորներ եղած լինել: Բոսվորթը իրավացիորեն նշում է, որ այս դեպքում մենք կունենայինք մուսուլմանական աշխարհում թյուրքերի հետագայում ունեցած դերի նախօրինակը:[22]

Մենք հակված ենք պաշտպանելու Բոսվորթի այս միտքը և կարծում ենք, որ թյուրքերի օգտագործման պրակտիկան կարող է փոխստված լինել արբասյան խալիֆայի կողմից: Հիրավի Մավերաննահրում հակաարաբական բազմաթիվ ապստամբություններում, թյուրքերի մասնակցությունը վկայված է մի շարք աղբյուրներում: Սկսած VII դարից և մինչև անկախ մուսուլմանական դինաստիաների հաստատումը Մավերաննահրում (IXդ.), թյուրքերը բազմիցս աջակցել են իրանցի տիրակալների հակահալամական շարժումներին: Ամենավառ օրինակներից է Ներշախիի կողմից վկայված նրանց մասնակցությունը 766թ. Մուկաննայի հայտնի աղանդավորական շարժմանը[23], ինչպես նաև 806թ.՝ Ռաֆի իբն Լայսի բարձրացրած խռովությանը[24] (ըստ Տաբարու հաղորդման):

Ըստ Յակուբիի և Տաբարու, Մամունի իշխանության վերջին տարիներին Մութասիմի հրամանով Սամարրանդի ստրկավաճառքի շուկաներից գնվեցին հարյուրավոր թյուրք ստրուկներ, որոնք առաջին անգամ կազմեցին ապագա խալիֆայի թիկնապահ ջոկատը (թվով մոտ 3000), որն այնուհետև պետք է խալիֆայական զորքի հիմքը դառնար: Աղբյուրները միանշանակ մատնանշում են Նուհ իբն Ասադի (Սամանյանների դինաստիայի ապագա հիմնադիր) դերը Մութասիմի համար Մավերաննահրից այս դուլամների գնման, ինչպես նաև Իրաքում արդեն եղած դուլամների հավաքագրման գործում:[25]

Դալամների կամ մամլուքների ձեռքբերման ճանապարհները նորից սերտորեն կապված էին Մավերաննահրի հետ: Դրանցից ամենահիմնականը, ինչպես արդեն վերը նշվեց, ստրուկների զանգվածային գնումն էր Մավերաննահրի ստրկավաճառքի շուկաներում: Կարևոր էին նաև գերեվարության և նվիրատվության ճանապարհները: Պակաս կարևոր չէր նաև դուլամ-

ների տեսքով եարկավճարության ճանապարհը:

Ընդհանրապես, Աբբասյաններին ղուլամների մատակարարման գործում, ինչպես արդեն վերը նշվեց, մեծ դեր ունեին Սամանյանները և Թահիրյանները, որոնք նախ վերահսկում էին Մավերաննահրի ստրկավաճառ շուկաները, դրանցից մեծ օգուտներ ունենալով, ինչպես նաև նրանց ստրկահարկեր վճարելով: Այստեղ, օրինակ, կարելի է բերել XդՀ. աշխարհագետ Մուկադդասիի հաղորդումը, ըստ որի կենտրոնական իշխանությունների կողմից Խորասանի վրա պարտադրված հարկը տարեկան կազմում էր տասը հազար ստրուկ: [26]

Գնվելուց հետո ղուլամները որոշակի ռազմական ուսուցում էին անցնում, իսկ այնուհետև՝ ընդգրկվում ռազմաջոկատներում:

Մեր կարծիքով, գոյություն ունի նաև մեկ այլ կարևոր նախադրյալ, որը նույնպես մեծ նշանակություն է ունեցել ստրուկ զինվորականության կիրառման գործընթացում: Մենք պետք է նշենք, որ մուսուլման տիրակալները սահմանափակ քանակությամբ ղուլամներ ունեցել են նաև մինչև Մութասիմը և անգամ աբբասյան տիրապետությունից շատ առաջ: Այս փաստը մեզ թույլ է տալիս եզրակացնել, որ այդ երևույթը սաղմնային վիճակում արդեն իսկ վաղուց գոյություն է ունեցել մուսուլմանական իրականության մեջ: Այսպես, օրինակ, Բալազուրիի հաղորդմամբ, 686-687թթ. հակաօմայան կուսակցության ղեկավար Աբդալլա իբն ալ-Զուբայրի եղբայր Մուսաբի հրամանատար Աբդալլա իբն ալ-Իսբահանին Ալիդների խռովության ղեկավար Մուխթարի դեմ ճակատամարտում հանել է 400 մամլուք: [27]

Մեկ այլ հետաքրքրական տեղեկություն պահպանվել է ասորի հեղինակ Բար-Պենկայիի մոտ (VIդ.), որի համաձայն հենց այդ Մուխթարը, ունենալով մարտունակ և հավատարիմ զորքի կարիք, Քուֆայի բնակիչներին հրամայել է ազատ արձակել իրենց ստրուկներին և դրանց օգտագործել հակառակորդի դեմ իբրև զինվորական ուժ: Ըստ ասորի հեղինակի, այս նպատակով ազատագրված և որպես զինվորական ուժ հավաքագրված ստրուկների թիվը հասնում էր 30,000.[28]: Այնուհետև հեղինակը հաղորդում է, որ ազատագրված ստրուկները այնուհետև նախաձեռնեցին այսպես կոչված «շուրտեների» խռովարարական շարժումը:[29] Դժվար չէ նկատել, որ տվյալ դեպքում մենք գործ ունենք ազատություն ստացած ղուլամների ջոկատի հետ:

Մուսուլման հեղինակները տեղեկություններ են հայտնում նաև սահմանափակ թվով ղուլամների մասին, որոնք ծառայում էին որոշ Օմայան արքայազների ջոկատներում կամ շքախմբերում: [30]

Աբբասյանների օրոք արդեն Մանսուր խալիֆան (754-775) ուներ ղուլամներ, որոնք արքունիքում կատարում էին տարբեր պարտականություններ: [31]

IXդ. սկզբին ստրուկ զինվորներով համալրված ջոկատներ արդեն իսկ ի հայտ են գալիս մինչև Մութասիմի իշխանությունը՝ նախ 800թ. առաջին Աղ-

լաբյան՝ Իբրահիմի (800-812), իսկ այնուհետև 820թ. Իսպանիայի Օմայան Հաքամ I-ի (796-822) բանակներում:[32]

Մեր կարծիքով, կա մեկ այլ գործոն ևս, որը կարող է ազդեցություն ունեցած լինել ստրուկ զինվորականության ինստիտուտի ձևավորման վրա: Սա բյուզանդական կայսրերի գվարդիաներում օտարազգի վարձկան զինվորների ներգրավման երևույթն է: Ճիշտ է, այս զինվորները ստրուկի կարգավիճակ չեն ունեցել, և ինչպես նշվեց վերը, Բյուզանդիայում արգելված էր նրանց կիրառումը որպես կանոնավոր ռազմական ուժ, սակայն, հնարավոր է, որ այս գաղափարը վախառված լիներ մուսուլմանական հասարակության կողմից և կիրառված՝ վերավտխված ձևով: Այնուամենայնիվ, բյուզանդական ռազմական վարձկանության ինստիտուտի ազդեցության խնդիրը մուսուլմանական ստրուկ զինվորականության ձևավորման վրա հատուկ ուսումնասիրության կարիք ունի:

Ի մի բերելով վերը շարադրվածը կարելի է ասել, որ արևելագետների կողմից ավանդաբար նշվող գործոններից և պատճառներից բացի, խալիֆայության տարածքում ստրուկ-վարձկանության առաջացման կարևոր նախադրյալներից մեկը եղել է խալիֆայության գոյության տարբեր ժամանակահատվածներում որպես ռազմական ուժ փոքր թվով դուլամների սահմանափակ կիրառման պրակտիկան մինչև նրանց համատարած օգտագործումը Մութասիմ խալիֆայի օրոք:

SUMMARY

Among the factors which supported the introduction of military-slavery (ghulam-mamluk) institution by Abbasid caliph Mu'tasim in the first third of IX c. the following should be mentioned:

- political, i.e. Mu'tasim's eagerness to set up the military force which may counterbalance the 'abna - up to now the state army of Khurasani descent which no more could be relied on, since from Mamun's time they have been permanently involved in anti-caliph and internal Abbasid intrigues and strifes; Mu'tasim hoped that his new army will be tied with him on individual basis as slaves are tied to his master.

- military, i.e. Abbasids' aspiration to replace militarily inefficient 'abna with much more able army consisting mainly of the Turkish ghulams;

- Mawarannahri (Transoxanian), i.e. we support C.E. Bosworth's suggestion that the Turks may have been recruited in armies of Iranian dihqans of Transoxania as mercenaries and this model may have been borrowed by Mu'tasim. This suggestion seems to be real because Mu'tasim himself have been with Mamun in Marw during the Mamun-Amin war, and could have appreciate the Turks as fierce warriors.

- the factor which we think may have been of particular importance for introduction of slave status army is that the existence of ghulams is recorded by Muslim sources in different periods of Caliphate since the Omayyad time. Baladhuri mentions that one of the anti-Omayyad party's head's 'Abdalla b. al-Zubayr's brother's commander 'Abdalla b. al-Isbahani used his 400 mamluks in the battle againts the Alid army led by Mukhtar (687). Syrian historian Bar-Penkaye of VII c., further informs us that this Mukhtar himself when lacking efficient force ordered the Kufans to free their slaves and formed an army to fight the enemy. We believe that here proto-ghulam phenomenon can be seen.

We also suggest that Byzantine Emperor's tradition of recruitment troops of alien origin may have also influenced on the establishment of ghulam army by the Abbasids. However this problem needs further investigation.

To summarise one can stress that two last factors may have nad particular importance in adoption of slavery military institution by Abbasids.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. «Ղուլամ» բառի նշանակությունը տարածվում է ոչ միայն ստրուկ զինվորների, այլև տնային տնտեսության զբաղված ստրուկների վրա (GHULAM, EI2).

2. «Մամլուք»՝ արաբերեն նշանակում է «գնված», «ունեցվածք», Баранов, Арабско-русский словарь, М, 1988.

3. Սովորական ստրուկի անվանումը արաբերեն.

4. Удальцова З.В. Положение рабов в Византии VI в. Византийский Временник, 1964, էջ 13, բերված է ըստ Procopii Caesarensis, Anecdota, ed. J.Haury, Lipsiae, 1913.

5. Նույն տեղում:

6. Նույն տեղում:

7. GHULAM, EI2 (Encyclopaedia of Islam, Second edition), Persia.

8. Տես А.И. Колесников, К вопросу об источниках рабства и правовом положении рабов в раннесредневековом Иране (III-VII вв. н.э.), Рабство в странах

востока в средние века, М., 1976 ժողովածուում:

9. GHULAM, EI2, Persia.

10. GHULAM, EI2, Persia.

11. S.Vryonis, Seljuk Gulams and Ottoman Devshirmes, Der Islam, v. 41.

12. R. Levy, The Social Structure of Islam, Cambridge, 1969, ¿Ç 451/

13. D. Sourdel, GULAM, EI2: The Caliphate; C.E. Bosworth, GULAM, EI2, Persia; К.Э. Босворт, Нашествие варваров: появление тюрок в мусульманском мире, Мусульманский мир 950-1150, Москва, 1981; D.Ayalon, Outsiders in the Lands of Islam: Mamluks, Mongols and Eunuchs, Variorum Reprints, London, 1988;P.Crone, Slaves on Horses: The Evolution of the Islamic Polity, Cambridge, 1980; B.Lewis, Race and Slavery in Islam; J. L. Bacharach, African Military Slaves in the Medieval Middle East: The Cases of Iraq (869-955) and Egypt (868-1171), International Journal of Middle East Studies 13, 1981, էջ 471-2.

14. D.Ayalon, Outsiders in the Lands of Islam.

15. J.L. Bacharach, African Military Slaves.

16. Նույն տեղում, passim.

17. Տես 8-րդ հղումը:

18. Խոսքը Պ.Քրոունի և Մ.Քուքի (Crone P., and Cook M., Hagarism, the Making of the Islamic World, Cambridge, 1977) գրքի մասին է, որում հեղինակները փաստորեն ժխտում են իսլամի ծագման վերաբերյալ բոլոր մուսուլմանական աղբյուրների տեղեկությունների իսկությունը, ենթադրելով, որ դրանք հիմնված են շինծու փաստերի վրա և իսլամի ստեղծման իրական ակունքները թաքցնելու նպատակ ունեն: Հեղինակները եզրակացնում են, որ Մուհամմադը կարող է և գոյություն ունեցած չլինել ընդհանրապես և որ իսլամը ոչ այլ ինչ է, քան հրեական մի աղանդ:

19. R.Frye, Aydin Sayili, Turks in the Middle East before the Saljuqs, Journal of the American Oriental Society, Vol. 63, 1943; Osman S.A. Ismail,, Mu`tasim and Turks, Bulleten of the School of Oriental and African Studies; ús man S.A. Ismail, The founding of a new capital: Samarra, Bulletin of the School of Oriental and African Studies. Vol. 31, 1968.

20. Սա մասնավորապես ի հայտ եկավ Ռեյի մոտ տեղի ունեցած ճակատամարտում, որտեղ Ամինին աջակցող արաբական հեծյալները պարտություն կրեց; Տաբարի, (Tabari, Ta'rikh al-Rusul wa'l-Muluk, Ed. M.J. de Goeje et al., Leiden, 1879-1901) h.3, pp. 883-7; տե՛ս H.Kennedy, The Early Abbasid Caliphate, London, 1981, p. 140.

21. Նույն տեղում:

22. .Э. Босворт, Нашествие, էջ. 22.

23. В.В. Бартольд, Туркестан в эпоху монгольского нашествия, В.В. Бартольд Сочинения, т. 1, 1963, էջ. 257 (բերվում է ըստ Ներշախի, (Description topografique et historique de Boukhara par Mohammed Nerchakhy, suivie de textes relatifs à la Transoxiane. Texte persan publié par Ch. Schefer, Paris, 1892 (PÉI.OV, IIIe sér., vol. XIII), էջ 9).

24. В.В. Бартольд, Туркестан (Տաբարի, բերվում է ըստ դե Գոյե,III, էջ 484).

25. Յակուբի (Ya'qubi, Kitab al-Buldan, ed. M. de Goeje. Leiden, 1892, էջ III էջ. 255).

26. Սուկաղդասի, Ahsan at-taqasim fi ma'rifat al-aqalim.Ed. M.J.Goeje, Leiden, 1906, էջ 340; տե՛ս նաև Կ.Է.Բոսվորտ, Нашествие, էջ 23.

27. D. Ayalon, Preliminary Remarks on the Mamluk Institution., D. Ayalon, Outsiders in the Lands of Islam; IX էջ.44; Բալազուրի, (Baladhuri, Futuh al-Buldan, Ed. M.J. de Goeje, Leiden, 1866Ã. 366 (II. 6-7).

28. А.И. Колесников, К вопросу об источниках рабства, էջ. 419.

29. Նույն տեղում:

30. GHULAM, EI2, T. Lewicki, Folia Orientalia, IV (1962), էջ. 319.

31. D. Ayalon, Outsiders, IX, էջ. 48.

32. P. Crone, Slaves, էջ 75.